ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՆԻՍՏԻ

Արմավիր համայնք
15.03.2024թ.

2024 թվականի մարտի 15-ին Արմավիրի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Արմավիր համայնքի ղեկավարի՝ 2024 թվականի հունվարի 23-ի թիվ 0099-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի նիստ՝ Մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում առաջարկների քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ:
Նիստին մասնակցում էին հանձնաժողովի նախագահ Ֆ. Պետրոսյանը, նախագահի տեղակալ Ռ. Մանուկյանը, քարտուղար Թ. Շառոյանը, անդամներ՝ Ն. Դավթյանը, Ռ. Մելքոնյանը, Մ. Սերոբյանը, Ա. Թովմասյանը:

Օրակարգում՝

1. Արմավիր համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում առաջարկների քվեարկության արդյունքների ամփոփում:

Լսեցին.

Հանձնաժողովի նախագահ Ֆելիքս Պետրոսյանը ներկայացրեց, որ մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման ժամանակացույցի համաձայն՝ առաջարկների քվեարկությունն ավարտվել է:

Հանձնաժողովի քարտուղար Թամարա Շառոյանը ներկայացրեց առաջարկների քվեարկության արդյունքները՝ առավելագույն թվից նվազման կարգով.

1. Հանգստի վայր՝ քաղաքի սրտում (Արմավիրի համայնքապետարանի և Արմավիր համայնքի թիվ 1 մշակույթի տան միջև գտնվող տարածքում ժամանակակից լուծումներով այգու կառուցում), հեղինակ՝ Գայանե Հարոյան – **1082** ձայն :

2. Լենուղի գյուղի վարչական ղեկավարի նստավայրի շենքի մասնակի հիմնանորոգում (տանիք, դռներ և պատուհաններ), հեղինակ՝ Հրաչյա Ներսիսյան – **1075** ձայն:

3. Մյասնիկյան գյուղի Մշակույթի տան դիմացի փոքր այգու և ճեմուղու հիմնանորոգում, հեղինակ՝ Սարգիս Հովսեփյան – **977** ձայն:

4. Արմավիր քաղաքի Մխիթար Հերացի փողոցի ասֆալտապատում, հեղինակ՝ Գեղամ Աշուղյան – **325** ձայն:

Այնուհետև հանձնաժողովի քարտուղար Թամարա Շառոյանը ներկայացրեց ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 2-ի N 1890-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջներին համապատասխան այն առաջարկ-նախագծերը, որոնց օգտին քվեարկել են քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների առնվազն մեկ տոկոսը.

1. Հանգստի վայր՝ քաղաքի սրտում (Արմավիրի համայնքապետարանի և Արմավիր համայնքի թիվ 1 մշակույթի տան միջև գտնվող տարածքում ժամանակակից լուծումներով այգու կառուցում), հեղինակ՝ Գայանե Հարոյան – **1082** ձայն :

2. Լենուղի գյուղի վարչական ղեկավարի նստավայրի շենքի մասնակի հիմնանորոգում (տանիք, դռներ և պատուհաններ), հեղինակ՝ Հրաչյա Ներսիսյան – **1075** ձայն:

3. Մյասնիկյան գյուղի Մշակույթի տան դիմացի փոքր այգու և ճեմուղու հիմնանորոգում, հեղինակ՝ Սարգիս Հովսեփյան – **977** ձայն:

Հանձնաժողովը որոշեց.

Առաջարկել Արմավիր համայնքի ղեկավար Վարշամ Սարգսյանին՝ վերոնշյալ երեք առաջարկ-նախագծերի հիման վրա կազմել սուբվենցիոն հայտեր և ներկայացնել ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ համաձայն ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 2-ի N 1890-Ն որոշմամբ հաստատված կարգի:

Հանձնաժողովի նախագահ Ֆելիքս Պետրոսյան՝

քարտուղար Թամարա Շառոյան՝